ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 7 - 3 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

_____ Դ. Գալոյան

23 դեկտեմբերի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԲԱՑ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Բաց հասանելիության» քաղաքականությունը մշակվել է Եվրոպական Միության կողմից համաֆինանսավորված «Մոլդովայի և Հայաստանի բուհերի հետազոտությունների կառավարման և բաց գիտության կարողությունների զարգացում» ԷՐԱԶՄՈՒՍ+ ՄԻՆԵՐՎԱ ("MINERVA-Strengthening Research Management and Open Science Capacities of HEIs in Moldova and Armenia" (Ref. nr.: 597912-EPP-1-2018-1-MD-EPPKA2-CBHE-SP) of Erasmus+, the Key Action 2 Capacity Building in the field of Higher Education) ծրագրի շրջանակներում:

Եվրահանձնաժողովի աջակցությամբ հրապարակված սույն փաստաթղթի բովանդակությունն արտացոլում է միայն հեղինակների կարծիքները և Եվրահանձնաժողովը որևէ պարտավորություն չի կրում սույն փաստաթղթում ներկայացված տեղեկության օգտագործման համար:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքականության նպատակն է ապահովել առցանց հասանելիություն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) իրականացված հետազոտությունների արդյունքներին:

2. Գիտահետազոտական արդյունքների «Բաց հասանելիությունը» (Open Access) հիմնված է գիտելիքի՝ որպես հանրային բարիքի ճանաչման և դրանից բխող սոցիալական ու տնտեսական օգուտների վրա:

3. «Բաց հասանելիության» ապահովման միջոցով հետազոտական արդյունքների տեսանելիության շրջանակի ընդլայնումը նպաստում է Համալսարանի հետազոտողների հրապարակումների ազդեցության ընդլայնմանը:

4. Համալսարանի պահոցում արխիվացվող ՀՊՏՀ գիտահետազոտական աշխատանքներն ապահովվում են դրանց համակարգմամբ, երկարաժամկետ պահպանմամբ, ինչպես նաև նպաստում են Համալսարանի գիտական արդյունքների հետագա տարածմանը, դրանց ներքին և արտաքին գնահատումների համար անհրաժեշտ հասանելիությանը:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՇՐՋԱՆԱԿԸ

Համալսարանը ստանձնում է գիտության զարգացման և գիտելիքի տարածման պարտավորություն՝ ընդունելով բաց, վերարտադրելի և պատասխանատու հետազոտությունների իրականացման սկզբունքները:

Համալսարանը ընդունում է «բացությունը» որպես իր գործունեությունն առաջնորդող սկզբունքներից մեկը և պարտավորվում խթանել այն՝ աջակցելով և խրախուսելով հրապարակումների և տվյալների «Բաց հասանելիությունն» ու «Բաց գիտությունը»:

ՀՊՏՀ «Բաց գիտության» առաքելությունն է՝ նպաստել գիտության որակի, հասանելիության, թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը՝ մեծացնելով հետազոտությունների հրապարակայնությունը, ամբողջականությունը, վերարտադրելիությունը՝ խթանելով գիտելիքի շրջանառությունը նոր հետազոտությունների և նորամուծությունների միջոցով:

ՀՊՏՀ «Բաց գիտության» արժեքներն են.

- Գիտության որակ և ամբողջականություն:
- Թափանցիկություն և արդյունավետություն:
- Համագործակցություններ և նորարարություններ:

«Բաց գիտությունը» բարելավում է գիտական հետազոտությունների որակն ու ամբողջականությունը, մեծացնում ընթերցողների թիվը՝ ապահովելով տեղեկատվության և գիտելիքի ազատ հոսքը: «Բաց հասանելիությունը» գիտական հետազոտությունների առցանց մուտքի անսահմանափակ ապահովումն է:

Համալսարանն ընդունում է «Բաց հասանելիությունն» առաջ մղող սոցիալական արդարության սկզբունքները՝ խթանելով բաց փոխանակման, մենթորության և հմտությունների զարգացման մշակույթը:

Այդ նպատակով Համալսարանը ստանձնում է «Բաց հասանելիության» քաղաքականության իրականացումը, որը վերաբերում է Համալսարանի բոլոր հետազոտողներին: Այն դեպքերում, երբ հետազոտությունը ֆինանսավորում է երրորդ կողմը, վերջինիս հասանելիության, արխիվացման վերաբերյալ ֆինանսավորող կողմի հետ ցանկացած համաձայնագիր գերակայում է սույն քաղաքականությանը:

ՀՊՏՀ «Բաց հասանելիության» հիմնական նախաձեռնություններն են.

- Համալսարանի ուսանողներին և գիտնականներին առցանց հետազոտական ռեսուրսներից օգտվելու ավելի լավ հնարավորությունների ընձեռում,
- ռեսուրսների համակարգում և առցանց տեղեկատվության հասանելիության ապահովում,
- Համալսարանի հետազոտողների մտավոր սեփականության արդյունք հանդիսացող հետազոտությունների միջազգայնացում, Համալսարանի ակադեմիական կազմի հետազոտությունները հասանելի դարձնելու միջոցով միջազգայնացման հնարավորությունների ընձեռում:

«Բաց հասանելիության» գործողությունների իրականացման պատասխանատու ստորաբաժանումներն են Համալսարանի գիտության բաժինը, գրադարանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը, որոնց գործողություններն այս առումով համակարգվում են Համալսարանի գիտության գծով պրոռեկտորի կողմից (յուրաքանչյուր գործողության գծով պատասխանատվությունն ավելի մանրամասն

ներկայացված է Հայաստան պետական տնեսագիտական համալսարանի «Բաց գիտության» ռազմավարության գործողությունների ծրագրում):

Սույն քաղաքականությունը հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 7-3 որոշմամբ և ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

3. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բաց հասանելիության» քաղաքականության իրականացման շրջանակներում **Համալսարանը պատասխանատու է**.

1. Հրապարակումները «Բաց հասանելի» ռեժիմում ներկայացվածության ապահովման համար և այդ նպատակով կազմակերպվելու են հետազոտողներին և Համալսարանի այլ շահառուներին վերապատրաստելու, խորհրդատվության տրամադրելու և իրազեկման այլ միջոցառումներ: «Բաց գիտության» հմտությունների ձեռքբերումը պետք է կազմի հետազոտողներին առաջարկվող մասնագիտական վերապատրաստման և կարիերայի զարգացման անբաժանելի մասը:

2. Համալսարանի բոլոր հրապարակումների բաց հասանելի պահոցի ստեղծման համար, որը կլինի բաց, կուտակային էլեկտրոնային արխիվ՝ ստեղծված Համալսարանի գրադարանի կառուցվածքում, որը կառավարվելու է գրադարանի կողմից՝ համագործակցելով այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ (գիտության բաժին, «Տնտեսագետ» հրատարակչություն, «Ամբերդ» հետազոտական կենտրոն, ֆակուլտետներ, ամբիոններ և այլն): Պահոցի նպատակն է կուտակել, պահել, պահպանել և տարածել համալսարանի գիտական գործունեության արդյունքները՝ դառնալով գիտահետազոտական հարթակներում հետազոտությունները խթանելու և առաջ մղելու միջոց:

3. Նշանակել պահոցի ադմինիստրատոր, որին կվերապահվի հետազոտական տվյալների հետ կապված բոլոր հարցերի կարգավորումը՝ ներառյալ «Տվյալների կառավարման պլանների» (Data Management Plan) մշակման և ազգային ու դոնոր կազմակերպությունների քաղաքականությունների հետ համաձայնեցման հարցերը:

4. Հետազոտական արդյունքների արխիվացման, գրանցման, բաշխման, դրանց երկարաժամկետ պահպանման համար, ինչպես նաև հետազոտողներին

համապատասխան խորհրդատվություն տրամադրելու մեխանիզմների մշակման և ծառայությունների տրամադրման համար:

5. Հետազոտողներին աշխատանքի ընդունման և հետազոտությունների գնահատման գործընթացում «Բաց գիտության» չափանիշների ներդրման համար, ինչպիսիք են հրապարակումների և տվյալների «Բաց հասանելիությունը», համագործակցային գիտական նախագծերում ներգրավվածությունը, բաց կրթական ռեսուրսների օգտագործումը և այլն:

6. Քաղաքականության իրականացման մշտադիտարկման համար՝ պահոցի հրապարակումների վերաբերյալ տեղեկատվությունը (մուտքի և ներբեռնումների քանակ) համեմատելով ինդեքսավորման ծառայություններից ստացված գիտաչափական տվյալների հետ:

7. Մտավոր սեփականության իրավունքների և տվյալների պաշտպանության քաղաքականության իրականացման համար, որը կկարգավորի նաև տվյալների հրապարակման հետ կապված իրավահարաբերությունները:

Համահետազոտողները պատասխանատու են.

1. Սույն քաղաքականության սկզբունքներին և պահանջներին համապատասխան իրենց հրապարակումների, տվյալների և հետազոտական ռեսուրսների կառավարման համար:

2. Հրապարակումների և հետազոտական տվյալների պատրաստումը, պահպանումը, կառավարումն ու տարածումը Համալսարանի կազմակերպչական, կարգավորող, ինստիտուցիոնալ և այլ պայմանագրային ու իրավական պահանջներին համապատասխանեցնելու համար, եթե երրորդ կողմի հետ այլ պայմանավորվածություններ չկան:

3. Անհրաժեշտության դեպքում իրենց հետազոտական գործունեության վերաբերյալ տվյալների կառավարման պլանների կազմման համար:

4. Իրենց հետազոտության արդյունքների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքի գրանցման և ստացված արդյունքների լիցենզավորման համար (անհրաժեշտության դեպքում):

4. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ «ԲԱՑ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ»

1. Հետազոտության հրատարակված տարբերակի մեքենայական ընթեռնելի էլեկտրոնային պատճենը կամ հետազոտողների կողմից պատրաստված գրախոսված հրապարակման վերջնական տարբերակը պետք է պահվի Համալսարանի պահոցում: Պահոցում ներբեռնումը կատարվում է անմիջապես հրապարակման ընդունվելուց հետո, իսկ մետատվյալները պետք է լինեն ամբողջությամբ բաց, որոնելի և մեքենայական ընթեռնելի՝ վերբեռնման պահից:

2. Հրապարակման ամբողջական տեքստը պետք է հնարավորության դեպքում անմիջապես հասանելի լինի պահոցում: Գրախոսվող հրատարակումների դեպքում ի պահ հանձնված նյութը կարող է փակ մնալ մինչև 6 ամիս (կամ մինչև 12 ամիս՝ հասարակական և հումանիտար գիտությունների ոլորտներում հրատարակվող նյութերի դեպքում): Մենագրությունների ի պահ հանձնումը պարտադիր է, բայց դրանց հասանելիությունը փակ է մինչև հրատարակչի էմբարգոյով նախատեսված ժամկետի լրանալը:

3. Համալսարանը խրախուսում է հետազոտողներին պահպանելու հետազոտությունների հեղինակային իրավունքը, իսկ հրատարակչություններին՝ լիցենզավորել միայն այն իրավունքները, որոնք անհրաժեշտ են հրատարակման համար: Դա հնարավոր է հրատարակչական պայմանագրի հավելումների օգտագործման միջոցով: Նմուշները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://sparcopen.org/wp-content/uploads/2016/01/Access-Reuse_Addendum.pdf.

4. Հնարավորության դեպքում 1-ին կետում նշված բոլոր հրապարակումների ամբողջական տեքստը ցանկալի է հասանելի դարձնել ստանդարտ՝ բաց լիցենզիայի շրջանակներում:

5. Համալսարանի և առանձին հեղինակների հետազոտական արդյունքների անհատական կամ ինստիտուցիոնալ գնահատման նպատակով հիմք կընդունվեն միայն այն հրապարակումները, որոնց մետատվյալները և ամբողջական տեքստերը պահվում են պահոցում:

6. Համալսարանի պահոցում «Բաց հասանելիության» ռեժիմում պետք է պահվեն բոլոր տեսակի հրապարակումները, ինչպիսիք են հոդվածները, զեկույցները,

հետազոտությունները, գիտաժողովների նյութերը, մենագրությունները, գրքերը և այլն, եթե դրանց հասանելիությունը հրատարակչի կողմից էմբարգո նախատեսված չէ:

7. Համալսարանի հետազոտողները պետք է պահոցում վերբեռնեն նաև իրենց այն հրապարակումները, որոնք լույս են տեսել մինչև այս քաղաքականության ուժի մեջ մտնելը, հնարավորության դեպքում՝ բաց հասանելի ռեժիմում:

8. Համալսարանի պահոցի կանոնակարգով սահմանվում են «Բաց հասանելիության» ռեժիմում հրապարակումների արխիվացման և ինքնաարխիվացման հիմնական սկզբունքներն ու ընթացակարգերը:

9. Համալսարանի գիտության բաժինը պատասխանատու է «Բաց հասանելիության» քաղաքականության մշտադիտարկման համար:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԲԱՑ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ»

1. Համալսարանի ակադեմիական կազմի ատենախոսությունների վերջնական տարբերակները պետք է պահվեն պահոցում:

2. Սույն քաղաքականության ընդունումից հետո այն պարտադիր է Համալսարանի ակադեմիական կազմի բոլոր անդամների համար, ովքեր պաշտպանում են ատենախոսություն:

3. Սույն քաղաքականության շրջանակներում ատենախոսությունների արխիվացման համար Համալսարանի բոլոր սպիրանտները պարտավոր են ներկայացնել ատենախոսության վերջնական տարբերակը՝ պաշտպանությունից հետո:

4. Հնարավորության դեպքում ամբողջական տեքստը ցանկալի է, որ հասանելի լինի ստանդարտ բաց լիցենզիայի շրջանակներում:

5. Պաշտպանված ատենախոսությունների պահոցում «Բաց հասանելիության» ռեժիմում ներկայացվածությունն ապահովվում է ատենախոսի գրավոր համաձայնության դեպքում:

6. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ «ԲԱՑ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ»

1. Պահոցի գործարկումից հետո (2022 թ.) Համալսարանի բոլոր հրապարակումները պետք է արխիվացվեն պահոցում: Բացի այդ, նորմատիվ

կսահմանվի նախորդ տասը տարիների հրապարակումների թվայնացման և արխիվացման համար՝ ամրագրելով ամեն տարի արխիվացվող ռեսուրսների քանակը:

2. Հետազոտությունների արդյունքները պահոցում պետք ներկայացված լինեն FAIR սկզբունքների համաձայն (այսինքն՝ գտնելի, հասանելի, փոխգործունակ և վերօգտագործելի): Եթե տեղեկատվությունը չի կարող բաց հասանելի լինել իրավական, գաղտնիության տվյալներ պարունակելու, էմբարգոյի կամ այլ պատճառով (օրինակ՝ անձնական կամ զգայուն տվյալներ), ապա հեղինակը(ները) պետք է ներկայացնի(են) անհրաժեշտ հիմնավորումներ, ինչը նույնպես պահպանվում է պահոցում:

3. Պահոցի գործարկումից հետո տարեկան կտրվածքով մշտադիտարկում կիրականացվի հետևյալ պարամետրերով՝ ներբեռնված նյութերի քանակ, գրանցված օգտվողներ, պահոցի օգտագործողներ, հեղինակների հրապարակումներ, դրանց մեջբերումներ և այլ գիտաչափական տվյալների մասով, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի համալսարանի կայքէջում:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պահոցում հրապարակումները պետք է հասանելի լինեն առավելապես Creative Commons-ը (CC BY) լիցենզիայի շրջանակներում:

8. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը պարտավորվում է.

1. Մշակել հետազոտության գնահատման շրջանակ, որը կխթանի հետազոտությունների որակն ու հանրահասանելիությունը: Նման գնահատումները հաշվի կառնվեն հետազոտողների աշխատանքային առաջխաղացման գործընթացի տարբեր փուլերում:

2. «Բաց գիտության» պրակտիկա (օրինակ՝ ժամանակավոր արդյունքների փոխանակում բաց հարթակների միջոցով, բաց կոդով ծրագրերի և այլ գործիքների օգտագործում, բաց համագործակցային նախագծերին մասնակցություն, հրապարակումների և տվյալների «Բաց հասանելիություն», բաց կրթական

ռեսուրսների օգտագործում և այլն) օգտագործող հետազոտողների համար ստեղծել պարգևատրման մեխանիզմներ: Այժմ պարգևատրման քաղաքականություն է կիրառվում Համալսարանի գիտնականների հրապարակումները Scopus և Web of Science ամսագրերում խթանելու համար:

9. ՈՒՍՈՒՑՈՒՄ

1. Համալսարանի գրադարանը այլ ստորաբաժանումների հետ (օրինակ՝ իրավաբանական բաժին, շարունակական կրթության բաժին, տվյալների պատասխանատուներ) պարտավորվում է մշակել վերապատրաստման դասընթացներ՝ հեշտացնելու «Բաց գիտության» կիրառումը և զինելու հետազոտողներին ու գրադարանավարներին և այլ աջակցող անձնակազմին անհրաժեշտ հմտություններով և փորձով: Նման վերապատրաստման դասընթացները պետք է ներառեն բաց հասանելիությամբ հրապարակման, հետազոտական տվյալների կառավարման և փոխանակման, հետազոտության ամբողջականության համար անհրաժեշտ հմտություններ:

10. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքականության իրականացման փաստերի վրա հիմնված վերանայումը տեղի կունենա դրա ընդունումից երեք տարի հետո, իսկ հետագա վերանայումները տեղի կունենան երկու տարին մեկ անգամ: Քաղաքականության վերանայումների յուրաքանչյուր դեպք կարող է իրականացվել միայն Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- ✓ **Տվյալների կառավարման պլան** - համառոտ պլան է, որը սահմանում է, թե ինչպես են ստեղծվելու տվյալները, ինչպես են դրանք փաստաթղթավորվելու, ով կունենա դրանց հասանելիություն, որտեղ դրանք կպահվեն, ով կպահուստավորի դրանք և արդյոք (և ինչպես) դրանք կտարածվեն և կպահպանվեն:
- ✓ **Էմբարգո** - այն ժամանակահատվածն է, որի ընթացքում հրապարակումը կարող է «փակ» լինել պահոցում (այսինքն՝ հրապարակումը բաց հասանելի չէ):
- ✓ **FAIR** - տվյալների կառավարման սկզբունքներ են. տվյալները լինեն գտնելի, հասանելի, փոխգործունակ և վերօգտագործելի:
  https://www.force11.org/group/fairgroup/fairprinciples.
- ✓ **ՀՊՏՀ պահոց** - բաց, կուտակային էլեկտրոնային արխիվ է, որի նպատակն է կուտակել, պահել, պահպանել և տարածել համալսարանի գիտական գործունեության արդյունքները՝ դառնալով գիտահետազոտական հարթակներում հետազոտական գործունեությունը դյուրինացնելու և խթանելու միջոց:
- ✓ **Համապատասխան պահոց (Suitable Repository)** - այն պահոցն է, որն ապահովում է գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հանրահասանելիությունը, մշտական նույնացուցիչների (DOI կամ այլ) միջոցով հղում կատարելու հնարավորությունը, ինչպես նաև տրամադրում է որակական մետատվյալներ (ներառյալ հետազոտության ֆինանսավորման հավաստումը)՝ հիմնված ընդունելի ուղենիշների և չափանիշների վրա:
- ✓ **Մետատվյալներ** - նկարագրիչներն են, որոնք օգտագործվում են տեղադրված նյութի նկարագրության, հետագծման, օգտագործման և կառավարման համար (նշվում է հրապարակման անվանումը, հեղինակը(ները), ինստիտուցիոնալ պատկանելությունը, ամսագրի անվանումը, որտեղ հրապարակումն ընդունվել է և այլն):
- ✓ **Creative Commons թույլտվություն (Լիցենզիա)** - ստանդարտ միջոց, որով հեղինակը կարող է ստեղծագործության օգտագործման թույլտվություն տալ (հեղինակային իրավունքի սահմաններում) այն հաշվով, որ ստեղծագործության

բովանդակությունը թույլատրվում է պատճենել, տարածել և այլ ձևերով օգտագործել՝ կախված լիցենզիայի տեսակից:

- ✓ **Բաց կրթական ռեսուրսներ** - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համաձայն՝ «կրթական, ուսուցման և հետազոտական նյութեր են, որոնք օգտագործում են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են բաց լիցենզիաները, թույլ են տալիս դրանց անվճար վերօգտագործումը, շարունակական բարելավումը և վերաբաշխումն այլոց կողմից կրթական նպատակներով»:
- ✓ **Հրապարակում** - սահմանվում է որպես հաստատության հետազոտողների կողմից գրախոսվող ամսագրերում հրատարակված (կամ հրատարակման ընթացքում գտնվող) աշխատանք:
- ✓ **Հետազոտության տվյալներ** - ցանկացած տեղեկատվություն է, որը հավաքվել, դիտարկվել, գեներացվել կամ ստեղծվել է հետազոտության սկզբնական արդյունքները վավերացնելու համար (օրինակ՝ հումքային տվյալներ՝ հավաքված գործիքների սենսորներից, վիզուալիզացիաներից, մոդելներից, ալգորիթմներից, պատկերներից, աուդիո և վիդեո ֆայլերից և այլն):
- ✓ **Հետազոտություն** - սահմանվում է որպես ցանկացած ստեղծագործ և համակարգված կատարված աշխատանք՝ նպատակ ունենալով զարգացնել գիտելիքը:
- ✓ **Հետազոտող** - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ակադեմիական կազմի ցանկացած անդամ՝ անկախ աշխատանքային կարգավիճակից՝ ներառյալ աշխատողները և ասպիրանտները: